

Իսկ Թուականը ձախ եղերքին ծայրը որոշ է Պ22 (= 1437). մանաւանդ Պ2 (= 1431) շատ յայտնի է¹: Ըսել է Ս. Լուսաւորչի հնագոյն խաչքարերէն մէկը, Երէւրդ շինութեան առթիւ: Երանի Թէ կարելի ըլլար բոլոր գրերը ճշդիւ կարդալ: Խաչքարս ոչ միայն մաշած է, այլ նաեւ վարի ծայրէն կոտրած՝ եռանկիւնածէւ: Մարմարն ալ լաւ տեսակէն չէ արդէն: Թուականը այդ կոտրուած մասին վրայ է:

1440. — Ա-Ե-Դ-Ե-Ն. Նախորդին պէս.

Գրիչ Մ-Դ-Ի-Ա Աքէդ:

«Եւ եղեւ աւարտ սորա» 1440 «ամի, ի Նշեմբերի Է (= 7), աւրն Շարաթ. ի հայրապետութեան Տեառն Գրիզորի բարեպաշտի եւ աստուածասիրի եւ իմաստնայն. Եւ եպիսկոպոսութեան սրբասիրի մեծի Տեառն Մաղաքիայի ի մերում հոնաց աշխարհին եւ Գազարեաց նահանգիս Սաւլխաթ ղըրիմի եւ Կաֆայիս մայրաքաղաքիս. ի մեռաստան մեծի Սրբոյն Անտոնի եւ Աստուածածնի. ի խնդրոյ պատուական եւ երջանիկ քահանային Աբրահամի» եւ այլն:

«Երգ աւետարանս ազատ արարեալ եգի ի սուրբ եկեղեցիս մեծի սրբոյն լուսաւորչի»... եւ որք յանդգնաբար իշխելոյ ազագաւ բան ասիցէ խոտորեցուցանել կամելով զԱւետարանս ի յալաթնա նկեղեցոյս, նա զվարձս Կայենի» եւ այլն:

«Եւ զիս զաղկաղկ եւ փանաքի գրիչս զՄաղաքիայս յիշեցէք՝ ի տէր Քրիստոս. ողորմութիւն հայցելով ինչ եւ ծնողաց իմոց, հայրն իմոյ Եւստոշային եւ մայր իմոյ Ազիզմէլիքին եւ քվերն իմոյ Շիրին Մէլիքին եւ Խուլթլուպէկին եւ աւաք եղբարն իմոյ Մաղաքիա կրանաւորին զգնացեալսն առ Քրիստոս եւ զամենայն ազգականքն իմ զկենդանիս եւ զհանգուցեալն յիշեցէք՝ ի

¹ Առաջին անգամ ես հետաքրքրուեցայ այս խաչքարով եւ կարդացի Պ2 (= 1431) Թուականը: Ետքը, իմ տեղեկութեանս վրայ, Յովհանէս Էֆ. Մուրատեան եւ Հրանտ Էֆ. Ասատուր դիտեցին Պ22 (= 1437). շատ մաշած Զն ալ կարդալով: